

# «ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔ» ուսանողական և աշակերտական Հանրապետական օլիմպիադա 2003



“Սահմանադրություն և իրավունք”  
 Հանրապետական Հինգերորդ օլիմպիադա  
 ( եզրափակիչ փուլ 2003թ. մայիսի 15-17 -ը )

## ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԶՆԵՐ

|  |  |
|--|--|
| ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿԵՆՏՐՈՆ<br>ՀՀ ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ<br>ԵՐԵՎԱՆԻ ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՑԻ ԱՆԱՎԱՆ ՃԵՄԱՐԱՆ - ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ<br>ՀԱՄԱԼԻՐ |  |
| ԱԶԱԿՑՈՒԹՅԱՄԲ՝  | ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ<br>ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ                                       |
| ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ՝  | ՀՀ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ,<br>“ԴՊՐՈՑԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱ”<br>ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ |
| ՀՈՎԱՆԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ՝  | ԱՄԵՐԻԿԱՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ<br>ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ՝ ABA / CEELI ԱԼԲԵՐՏ<br>ԲՈՅԱԶՅԱՆԻ ( ԱՄՆ ) |

## Նպատակը

Բարձրացնել երիտասարդության իրավագիտակցությունը, նրանց տալ անհրաժեշտ գիտելիքներ՝ մարդու իրավունքների եւ ազատությունների, դրանց պաշտպանության երաշխիքների ու կարգի մասին, հաղորդակից

դարձնել իրավական, ժողովրդավարական պետության բնորոշ գծերին, օգնել ճանաչելու Սահմանադրությունն ու սահմանադրական արդարադատության համակարգը, պատկերացում կազմել մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական Կոնվենցիայի մասին:

### **Կազմակերպման ձեռք եւ կարգը**

Դպրոցներում՝ վիկտորինայի եւ գիտելիքների բանավոր ստուգման կազմակերպում (գրույց):

Մարզերում եւ բուհերում՝ օլիմպիադայի անցկացում :

Ամփոփիչ փուլում՝ գործնական խաղեր (մասնավորապես, դատավարության կազմակերպում, որտեղ աշակերտները հանդես կգան որպես կողմեր, իսկ ուսանողները՝ դատավորներ):

Նախատեսվում է միջոցառումն անցկացնել 4 փուլով:

- մարզկենտրոններում, Երեւանում (4 փնջով) եւ Ստեփանակերտում հրավիրվում են դպրոցների մեկական ուսուցիչ, ովքեր դասավանդում են իրավունքի հիմունքներ: Նրանց համար հատուկ ծրագրով կազմակերպվում է սեմինար եւ տրամադրվում անհրաժեշտ գրականություն, այդ թվում՝ “Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիան” - 10000 օրինակ: Ուսուցիչներին ցույց է տրվելու նաեւ մեթոդական օգնություն՝ դպրոցներում վիկտորինա ու գիտելիքների բանավոր ստուգում կազմակերպելու համար,
- անցկացվում է մարզային, իսկ Ստեփանակերտում՝ հանրապետական օլիմպիադա՝ յուրաքանչյուր դպրոցից երկուական աշակերտի մասնակցությամբ: Օլիմպիադայի արդյունքներով ձեւավորվում է մարզային, Երեւանի 4 եւ ԼՂՀ աշակերտական թիմեր՝ 8 աշակերտի կազմով (6-ը հիմնական անդամ եւ 2-ը՝ փոխարինող),
- անցկացվում է բուհական օլիմպիադա (առանձին ծրագրով) եւ ձեւավորվում է ուսանողական 15 թիմ՝ 7-ական ուսանողի կազմով (5-ը հիմնական անդամ եւ 2-ը՝ փոխարինող),
- ամփոփիչ փուլում, Անանիա Շիրակացու անվան ճեմարանի (գիտակրթական համալիր) բազայի վրա, կազմակերպվում է 15 դատավարություն, որտեղ վիճակահանությամբ աշակերտական թիմերը հանդես կգան որպես դիմող եւ պատասխանող կողմեր, իսկ ուսանողական թիմերը՝ որպես դատարան: Ճեմարանի աշակերտներից կձեւավորվեն դատարանների աշխատակազմերը:

## **Արդյունքների գնահատման և ամփոփման կարգը**

Յուրաքանչյուր փուլում արդյունքների ամփոփումը կիրականացվի տեստային համակարգի եւ հատուկ հանձնախմբերի միջոցով: Տեստերը եւ վիրտուալ օրենքները կմշակվեն սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից: Հատուկ հանձնախմբերը կձեւավորի կազմկոմիտեն:

## **Աշխատանքների կազմակերպման պատասխանատուն**

Աշխատանքների կազմակերպման պատասխանատվությունը դրվում է կազմկոմիտեի վրա: Տեղեկատվական հեռախոսներն են՝ 58-81-80, 58-81-86 կամ 52-99-91:

## **Արդյունքների գնահատման և խրախուսման կարգը**

- դպրոցներում լավագույնը ճանաչված աշակերտներին տրվում է գրքերի փաթեթ եւ ՀՀ սահմանադրական իրավունք կենտրոնի պատվոգիր,
- մարզերում հաղթող ճանաչված աշակերտներին տրվում է գրքերի փաթեթ եւ ՀՀ սահմանադրական իրավունք կենտրոնի Պատվո վկայական, երկու տարով սահմանադրական դատարանի տեղեկագրի անվճար բաժանորդագրման իրավունք,
- հանրապետական փուլում հաղթող կարող են ճանաչվել՝
  - ա) դիմող կողմ - 2 թիմ՝ լավ ու լավագույն տիտղոսով,
  - բ) պատասխանող կողմ - 2 թիմ՝ լավ ու լավագույն տիտղոսով,
  - գ) դատարան - 2 թիմ՝ լավ ու լավագույն տիտղոսով:

Յուրաքանչյուր թիմի եւ նրա անդամների համար սահմանվում են հետեւյալ մրցանակները.

- հաղթողի դիպլոմ՝ թիմի յուրաքանչյուր անդամին,
- լավագույն ճանաչված թիմերին՝ ՀՀ սահմանադրական դատարանի հատուկ մրցանակ,
- լավ ճանաչվածներին՝ ՀՀ սահմանադրական իրավունքի կենտրոնի խրախուսական մրցանակ:

Հաղթողներին կտրվեն նաեւ կազմակերպիչների կողմից սահմանված այլ անհատական եւ խրախուսական մրցանակներ:

## Միջոցառման ֆինանսական ապահովումը

Միջոցառումների նյութական և ֆինանսական ապահովումը ստանձնում են կազմակերպիչները եւ հովանավորը:

### **“ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔ” ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԵՎ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱ**

#### **Օլիմպիադայի կազմկոմիտե**

#### **Նախագահ**

ՀՈՎՀԱՆԻՍՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐ - Նախագահ, ՀՀ ՍԴ նախագահի տեղակալ

#### **Անդամներ՝**

1. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՆՈՒՐԻՋԱՆ - ՀՀ կրթ. և գիտ. նախարարության հանրակրթական վարչության վերահսկողական բաժնի պետ
2. ՀԱԿՈԲՅԱՆ ԱՌՈՒՇԱՆ - ՀՀ ՍԴ աշխ.ղեկ. ՀՀ ՍԻԿ գործադիր տնօրեն
3. ՂԱԶԻՆՅԱՆ ԳԱԳԻԿ - ԵրՊՀ իրավաբանական ֆակուլտետի դեկան
4. ՍԱՐԳՍՅԱՆ ՍԱՄՎԵԼ - “Անանիա Շիրակացի” գիտակրթահամալիրի փոխտնօրեն
5. ԽԱԶԱՏՐՅԱՆ ԱՆԱՀԻՏ - “Անանիա Շիրակացի “ գիտակրթահամալիր
6. ՄԱՐՈՒԽՅԱՆ ԱՐՄԵՆ - ՀՀ ՍԴ իրավախորհրդատվական ծառ. գլխ. մասնագետ

### **“ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔ” ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԵՎ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱ**

#### **Հանրապետական փուլի ժյուրիի կազմը**

#### **Նախագահ**

ՔՈԶԱՐՅԱՆ ՎԻԳԵՆ - Իրավաբանների միության գործադիր տնօրեն

#### **Նախագահի տեղակալ**

ՊԵՊԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ - ՀՀ կրթ. և գիտ. նախարարության հանրակրթական վարչության գլխավոր մասնագետ

### Անդամներ՝

- ՆԵՐՍԻՍՅԱՆ ԱՐՄԵՆ - ՀՀ ՍԴ իրավախորհրդատվական ծառ. գլխ. մասնագետ
- ՄԱՐՈՒԽՅԱՆ ԱՐՄԵՆ - ՀՀ ՍԴ իրավախորհրդատվական ծառ. գլխ. մասնագետ
- ԳԵՎՈՐԳՅԱՆ ԿԱՐԵՆ - ԵրՊՀ
- ՎԱՂԱՐՇՅԱՆ ԱՐԹՈՒՐ - ԵրՊՀ
- ՍԻՐՈՒՆՅԱՆ ՌԱՖԱՅԵԼ - “Մխիթար Գոշ” համալսարանի իրավագիտ. ամբիոնի վարիչ

**“Սահմանադրություն և իրավունք”**  
**ճանաչողական-քարոզչական ծրագրի շրջանակներում կազմակերպվող**  
**հանրապետական հինգերորդ օլիմպիադայի**  
**ԵԶՐԱՓԱԿԻՉ ՓՈՒԼ**  
2003թ. մառտի 15-17 -ը

### ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ ԾՐԱԳԻՐ

#### Մայիսի 15, հինգշաբթի

*Մասնակիցների ժամանում ՀՀ մարզերից և Արցախից, դիմավորում ավտոկայանում*  
Գրանցում Անանիա Շիրակացու անվան ճեմարանում

18<sup>00</sup> Օլիմպիադայի եզրափակիչ փուլի հանդիսավոր բացում

Ողջույնի խոսք՝ ՀՀ սահմանդրական դատարանի նախագահ,  
ՀՀ սահմանադրական իրավունքի կենտրոնի խորհրդի նախագահ **Գ.**

#### **Հարությունյան**

ՀՀ կրթության և գիտության նախարար **Լ. Մկրտչյան**

19<sup>30</sup> Ընթրիք

20<sup>00</sup> Թիմերի նախապատրաստում մրցույթի առաջին փուլին խորհրդակցություն թիմերի ղեկավարների հետ

22<sup>30</sup> Գիշերային հանգիստ

### **Մայիսի 16, ուրբաթ**

08<sup>00</sup> Վերկաց

09<sup>00</sup> Նախաճաշ

09<sup>30</sup> Մրցույթի I փուլ՝ բրեյնրինգի անցկացում

13<sup>00</sup> Թիմերի նախապատրաստում մրցույթի երկրորդ փուլին

14<sup>30</sup> Ճաշ

17<sup>00</sup> Մրցույթի II փուլ, դատավարություն

19<sup>00</sup> Ընթրիք

19<sup>30</sup> Դատավարության շարունակություն

22<sup>30</sup> Գիշերային հանգիստ

### **Մայիսի 17, շաբաթ**

08<sup>00</sup> Վերկաց

09<sup>00</sup> Նախաճաշ

10<sup>00</sup> Մրցույթի II փուլի շարունակություն

14<sup>30</sup> Ճաշ

15<sup>30</sup> Հանդիպում ՀՀ սահմանադրական դատարանում

16<sup>30</sup> Էքսկուրսիա Երևան քաղաքով Այցելություն Ծիծեռնակաբերդ

18<sup>00</sup> Օլիմպիադայի արդյունքների ամփոփում և հանդիսավոր փակում

19<sup>30</sup> Հրաժեշտի ընթրիք

20<sup>30</sup> Գեղարվեստական ֆիլմի դիպում

22<sup>30</sup> Գիշերային հանգիստ

### **Մայիսի 18, կիրակի**

08<sup>00</sup> Վերկաց

09<sup>00</sup> Նախաճաշ

Օլիմպիադայի մասնակիցների մեկնում

---

**Օռիմպիադաօի տեղեկատու  
հեռախոսներ  
Սահմանադրական դատարանում՝  
52-99-91, 58-81-80, 58-81-86  
ճեմարանում՝  
64-01-02, 64-15-17, 64-07-87, (09) 43-51-85  
Ժամը 16.00-ից հետո՝ 64-79-03  
Հասցեն՝  
Նորքի հինգերորդ զանգված, Արտեմ Միկոսյանի փող. 35**

|               |          |          |          |          |          |          |          |          |          |           |           |           |           |           |           |           |           |           |           |           |           |           |
|---------------|----------|----------|----------|----------|----------|----------|----------|----------|----------|-----------|-----------|-----------|-----------|-----------|-----------|-----------|-----------|-----------|-----------|-----------|-----------|-----------|
| <b>ՏՈՄՍԵՐ</b> | <u>1</u> | <u>2</u> | <u>3</u> | <u>4</u> | <u>5</u> | <u>6</u> | <u>7</u> | <u>8</u> | <u>9</u> | <u>10</u> | <u>11</u> | <u>12</u> | <u>13</u> | <u>14</u> | <u>15</u> | <u>16</u> | <u>17</u> | <u>18</u> | <u>19</u> | <u>20</u> | <u>21</u> | <u>22</u> |
|---------------|----------|----------|----------|----------|----------|----------|----------|----------|----------|-----------|-----------|-----------|-----------|-----------|-----------|-----------|-----------|-----------|-----------|-----------|-----------|-----------|

## **S O M U 1**

### **1. Ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է՝**

1. ազատ ընտրությունների, հանրաքվեների, ինչպես նաև ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով,
2. ազատ ընտրությունների և հանրաքվեների միջոցով,
3. ՀՀ Ազգային ժողովի և Հանրապետության Նախագահի միջոցով,
4. ՀՀ Ազգային ժողովի և համայնքների ավագանիների միջոցով:

### **2. Նախարարներին նշանակում է՝**

1. ՀՀ վարչապետը.
2. ՀՀ Ազգային ժողովը՝ ՀՀ վարչապետի առաջարկությամբ.
3. Հանրապետության Նախագահը.
4. Հանրապետության Նախագահը՝ ՀՀ վարչապետի առաջարկությամբ

### **3. Համաներում հայտարարում է՝**

1. Հանրապետության Նախագահը՝ ՀՀ Ազգային ժողովի համաձայնությամբ.
2. ՀՀ Ազգային ժողովը՝ Հանրապետության Նախագահի առաջարկությամբ.
3. ՀՀ վարչապետը՝ Հանրապետության Նախագահի համաձայնությամբ.
4. Հանրապետության Նախագահը՝ ՀՀ վարչապետի առաջարկով:

### **4. Ինչո՞վ են տարբերվում բարոյական և իրավական նորմերը**

## S Ո Մ Ս 2

### 1. Իշխանության յուրացումը որևէ կազմակերպության կամ անհատի կողմից՝

1. անթույլատրելի է,
2. հանցագործություն է,
3. իրավախախտում է,
4. արգելվում է

### 2. ՀՀ Ազգային ժողովի կողմից կառավարությանն անվստահություն հայտնելու դեպքում կառավարությունը կազմավորում է՝

1. ՀՀ վարչապետը.
2. ՀՀ Ազգային ժողովը՝ ՀՀ վարչապետի առաջարկությամբ.
3. Հանրապետության Նախագահը.
4. Հանրապետության Նախագահը՝ ՀՀ վարչապետի առաջարկությամբ:

### 3. Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանումը հաստատում է՝

1. ՀՀ Ազգային ժողովը՝ Հանրապետության Նախագահի առաջարկությամբ,
2. Հանրապետության Նախագահը՝ ՀՀ կառավարության առաջարկությամբ,
3. ՀՀ Ազգային ժողովը՝ կառավարության առաջարկությամբ,
4. ՀՀ կառավարությունը՝ Հանրապետության Նախագահի համաձայնությամբ:

### 4. Ո՞ր իրավունքներն են անվանում բնական իրավունքներ

## S Ո Մ Ս 3

### 1. Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում է՝

1. իրավունքի գերակայությունը,
2. օրենքի գերակայությունը,
3. իրավական ակտերի գերակայությունը,
4. Հանրապետության Նախագահի հրամանագրի գերակայությունը:

### 2. Դեպքաններին նշանակում է՝



1. ՀՀ վարչապետը՝ Հանրապետության Նախագահի համաձայնությամբ,
2. ՀՀ Ազգային ժողովը,
3. Հանրապետության Նախագահը,
4. Հանրապետության Նախագահը՝ ՀՀ վարչապետի ներկայացմամբ:

### **3. Կենտրոնական բանկի նախագահ և տեղակալ նշանակում է՝**

1. ՀՀ Ազգային ժողովը՝ Հանրապետության Նախագահի առաջարկությամբ,
2. Հանրապետության Նախագահը՝ ՀՀ կառավարության առաջարկությամբ,
3. ՀՀ Ազգային ժողովը՝ ՀՀ կառավարության առաջարկությամբ,
4. ՀՀ կառավարությունը՝ Հանրապետության նախագահի համաձայնությամբ:

### **4. Ե՞րբ է ստեղծվել Մխ. Գոշի “Գիրք դատաստանին” և ի՞նչ հիմնարար գաղափարներ են ընկած նրա հիքմում**

#### **Տ Ո Մ Ս 4**

### **1. ՀՀ Սահմանադրության նորմերը գործում են՝**

1. անմիջականորեն,
2. այլ օրենքների միջոցով,
3. նորմատիվ իրավական ակտերի միջոցով,
4. այլ ակտերի միջոցով:

### **2. ՀՀ գլխավոր դատախազին նշանակում է՝**

1. ՀՀ վարչապետը,
2. ՀՀ Ազգային ժողովը,
3. Հանրապետության Նախագահը՝ ՀՀ Ազգային ժողովի ներկայացմամբ,
4. Հանրապետության Նախագահը՝ ՀՀ վարչապետի առաջարկությամբ:

### **3. ՀՀ Ազգային ժողովն Ազգային ժողովի վերահսկիչ պալատի նախագահ է նշանակում՝**

1. ՀՀ Ազգային ժողովի նախագահի առաջարկությամբ,
2. Հանրապետության Նախագահի առաջարկությամբ,
3. ՀՀ կառավարության առաջարկությամբ,

4. ՀՀ Ազգային ժողովի ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի առաջարկությամբ:

#### **4. Որտե՞ղ է ընդունվել և ի՞նչ է ամրագրում Ազատությունների մեծ խարտիան**

### **Տ Ո Մ Ս 5**

#### **1. ՀՀ Սահմանադրությանը հակասող միջազգային պայմանագրերը կարող են վավերացվել՝**

1. ՀՀ Սահմանադրության մեջ համապատասխան փոփոխություններ կատարվելուց հետո,
2. ՀՀ սահմանադրական դատարանի եզրակացության հիման վրա,
3. Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվելուց հետո,
4. հանրաքվեով հաստատվելուց հետո:

#### **2. Հանրապետության Նախագահը կարող է պաշտոնանկ արվել՝**

1. միայն պետական դավաճանության համար
2. պետական դավաճանության կամ այլ ծանր հանցագործության համար.
3. ցանկացած հանցագործության համար.
4. ՀՀ Ազգային ժողովի հայեցողությամբ:

#### **3. Կառավարությանը կարող է անվստահություն հայտնել ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի՝**

1. մեկ երկրորդը,
2. մեկ երրորդը
3. մեծամասնությունը
4. երկու երրորդը

#### **4. Ի՞նչ է քաղաքացիությունը: Ովքե՞ր են օտարերկրացիները և քաղաքացիություն չունեցող անձինք**

### **Տ Ո Մ Ս 6**

#### **1. ՀՀ քաղաքացին միաժամանակ՝**

1. չի կարող լինել այլ պետության քաղաքացի,
2. կարող է լինել այլ պետության քաղաքացի, եթե նա ազգությամբ հայ է,
3. կարող է լինել ԱՊՀ անդամ որևէ պետության քաղաքացի,

4. կարող է լինել այլ պետության քաղաքացի վաթսուն տարին լրանալուց հետո:

## **2. Հանրապետության Նախագահի հրաժարականն ընդունվում է՝**

1. ՀՀ սահմանադրական դատարանի կողմից,
2. ՀՀ Ազգային ժողովի կողմից,
3. ՀՀ սահմանադրական դատարանի կողմից՝ ՀՀ Ազգային ժողովի առաջարկությամբ,
4. ՀՀ Ազգային ժողովի և ՀՀ կառավարության համատեղ նիստում:

## **3. ՀՀ կառավարության կառուցվածքը և գործունեության կարգը սահմանվում է՝**

1. միայն օրենքով,
2. օրենքով և ՀՀ Ազգային ժողովի որոշմամբ,
3. ՀՀ կառավարության որոշմամբ,
4. ՀՀ վարչապետի ներկայացմամբ՝ Հանրապետության Նախագահի հրամանագրով:

## **4. Մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների դասակարգումը**

### **S Ո Մ Ս 7**

## **1. ՀՀ տարածքում ազատ տեղաշարժվելու և բնակավայր ընտրելու իրավունք ունեն՝**

1. օտարերկրացիները,
2. յուրաքանչյուր ոք,
3. քաղաքացիություն չունեցող անձինք,
4. յուրաքանչյուր քաղաքացի:

## **2. Հանրապետության Նախագահի պաշտոնը թափուր մնալու դեպքում, մինչև նորընտիր նախագահի կողմից պաշտոն ստանձնելը, Հանրապետության Նախագահի պարտականությունները կատարում է՝**

1. ՀՀ վարչապետը,
2. ՀՀ կառավարությունը,
3. ՀՀ Ազգային ժողովի նախագահը, իսկ եթե դա հնարավոր չէ՝ ՀՀ վարչապետը,
4. ՀՀ վարչապետը, իսկ եթե դա հնարավոր չէ՝ տարիքով ավագ պատգամավորը:

### **3. Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանությունն իրականացնում է՝**

1. ՀՀ Ազգային ժողովը՝ կառավարության միջոցով
2. ՀՀ վարչապետը.
3. Հանրապետության Նախագահը
4. ՀՀ կառավարությունը

### **4. Որո՞նք են քաղաքացու քաղաքական իրավունքներն և ազատությունները**

#### **Տ Ո Մ Ս 8**

#### **1. Իր կարծիքը պնդելու իրավունք ունի՝**

1. քաղաքացիություն չունեցող անձը,
2. յուրաքանչյուր ոք,
3. օտարերկրացին,
4. ՀՀ քաղաքացին:

#### **2. ՀՀ Ազգային ժողովի լիազորությունները սահմանվում են՝**

1. ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով,
2. ՀՀ Սահմանադրությամբ և ՀՀ Ազգային ժողովի կանոնակարգով,
3. ՀՀ Ազգային ժողովի որոշումներով,
4. ՀՀ Սահմանադրությամբ:

#### **3. ՀՀ վարչապետն ընդունում է՝**

1. հրամանագրեր,
2. հրահանգներ,
3. կարգադրություններ,
4. որոշումներ:

#### **4. Որո՞նք են ՀՀ Սահմանադրական դատարանի գործառույթները**

#### **Տ Ո Մ Ս 9**

#### **1. Խաղաղ, առանց զենքի ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու իրավունք ունեն՝**

1. ՀՀ քաղաքացիները,
2. յուրաքանչյուր ոք,
3. Հայաստանի Հանրապետությունում մշտապես ապրող անձինք,

4. կուսակցությունները:

## **2. Նորընտիր ՀՀ Ազգային ժողովը կազմված է՝**

1. 150 պատգամավորից,
2. 131 պատգամավորից,
3. 190 պատգամավորից,
4. 60 պատգամավորից:

## **3. ՀՀ կառավարության նիստերը հրավիրում և վարում է՝**

1. Հանրապետության Նախագահը,
2. Հանրապետության Նախագահը կամ նրա հանձնարարությամբ ՀՀ վարչապետը,
3. ՀՀ վարչապետը, իսկ եթե դա հնարավոր չէ, նախարարներից մեկը,
4. ՀՀ վարչապետը:

## **4. Ինչու՞մ է կայանում անմեղության կանխավարկածի էությունը**

### **Տ Ո Մ Ս 10**

## **1. Ընտրել և ընտրվել չեն կարող՝**

1. սահմանափակ գործունակ ճանաչված անձինք,
2. դատարանի վճռով անգործունակ ճանաչված, ինչպես նաև օրինական ուժի մեջ մտած դատավճռով ազատազրկման դատապարտված և պատիժը կրող քաղաքացիները,
3. յոթանասուն և ավելի տարիք ունեցող անձինք,
4. հիվանդանոցում բուժվող անձին

## **2. Նորընտիր ՀՀ Ազգային ժողովն ընտրությունից հետո չի կարող արձակվել՝**

1. վեց ամսվա ընթացքում,
2. մեկ տարվա ընթացքում,
3. երկու տարվա ընթացքում,
4. ընդհանրապես:

## **3. Հայաստանի Հանրապետությունում արդարադատությունն իրականացնում են՝**

1. միայն դատարանները,

2. դատարանները և ՀՀ արդարադատության նախարարությունը,
3. դատարանները և դատախազությունը,
4. դատարանները և ՀՀ արդարադատության խորհուրդը:

#### **4. Որո՞նք են ՄԱԿ-ի հիմնական կառույցները**

### **S Ո Մ Ս 11**

#### **1. Հողի նկատմամբ սեփականության իրավունք ունեն՝**

1. քաղաքացիություն չունեցող անձինք,
2. յուրաքանչյուր ոք,
3. օտարերկրացիները,
4. ՀՀ քաղաքացիները, ինչպես նաև օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք՝ օրենքով նախատեսված դեպքերում

#### **2. Պատգամավորը չի կարող հետապնդվել՝**

1. որևէ արարքի համար,
2. ոչ ծանր հանցագործության համար,
3. իր կարգավիճակից բխող գործողությունների, այդ թվում՝ ՀՀ Ազգայի ժողովում հայտնաձև կարծիքի համար,
4. իր կարգավիճակից բխող գործողությունների, այդ թվում՝ ՀՀ Ազգային ժողովում հայտնաձև կարծիքի համար, եթե այն զրպարտություն կամ վիրավորանք չի պարունակում:

#### **3. Օրինական ուժի մեջ մտած վճիռները, դատավճիռները և որոշումները վճռաբեկ դատարանում վերանայվում են՝**

1. ՀՀ գլխավոր դատախազի բողոքների հիման վրա,
2. ՀՀ գլխավոր դատախազի և նրա տեղակալների բողոքների հիման վրա,
3. ՀՀ գլխավոր դատախազի, նրա տեղակալների կամ հատուկ արտոնագիր ունեցող ու վճռաբեկ դատարանում գրանցված փաստաբանների բողոքների հիման վրա,
4. Կողմերի և ՀՀ գլխավոր դատախազի, նրա տեղակալների կամ հատուկ արտոնագիր ունեցող ու վճռաբեկ դատարանում գրանցված փաստաբանների բողոքների հիման վրա:

#### **4. ՀՀ Նախագահի լիազորությունները**

## S Ո Մ Ս 12

### 1. Առավելագույն աշխատաժամանակը, հանգստյան օրերը և ամենամյա վճարովի արձակուրդի նվազագույն տևողությունը սահմանվում են՝

1. օրենքով,
2. Հանրապետության Նախագահի հրամանագրով,
3. ՀՀ կառավարության որոշմամբ,
4. ՀՀ Ազգային ժողովի որոշմամբ:

### 2. Պատգամավորին չի կարելի կալանավորել, դատական կարգով վարչական կամ քրեական պատասխանատվության ենթարկել առանց՝

1. Հանրապետության Նախագահի թույլտվության,
2. ՀՀ Ազգային ժողովի համաձայնության,
3. ՀՀ գլխավոր դատախազի որոշման,
4. ՀՀ սահմանադրական դատարանի եզրակացության::

### 3. Արդարադատության խորհրդի դատախազ անդամների թեկնածություններն առաջադրում է՝

1. Հանրապետության Նախագահը,
2. ՀՀ գլխավոր դատախազը՝ Հանրապետության Նախագահի համաձայնությամբ,
3. ՀՀ վարչապետը՝ ՀՀ գլխավոր դատախազի առաջարկությամբ,
4. ՀՀ գլխավոր դատախազը:

### 4. Որո՞նք են ԱԺ իրավասությունները

## S Ո Մ Ս 13

### 1. Ոչ պետական ուսումնական հաստատությունների ստեղծման և գործունեության կարգը սահմանվում է՝

1. օրենքով,
2. ՀՀ կառավարության որոշմամբ,
3. նորմատիվ իրավական ակտերով,
4. գերատեսչական նորմատիվ ակտերով:

### 2. Պատգամավորի լիազորությունների դադարման կարգը սահմանվում է՝

1. ՀՀ Ազգային ժողովի կանոնադրագրով,
2. Հանրապետության Նախագահի հրամանագրով,
3. ՀՀ Ազգային ժողովի որոշմամբ,
4. ՀՀ Սահմանադրությամբ:

### **3. Դատավորների և դատախազների պաշտոնեական պիտանիության ամենամյա ցուցակները կազմում են՝ է՝**

1. ՀՀ գլխավոր դատախազը,
2. ՀՀ արդարադատության նախարարը,
3. դատավորներին՝ ՀՀ արդարադատության նախարարը, իսկ դատախազներին՝ ՀՀ գլխավոր դատախազը,
4. արդարադատության խորհուրդը:

### **4. Որո՞նք են ՀՀ կառավարության իրավասությունները**

#### **Տ Ո Մ Ս 14**

### **1. Անվճար իրավաբանական օգնությունը ցույց է տրվում՝**

1. օրենքով նախատեսված դեպքերում,
2. Հանրապետության Նախագահի հրամանագրով նախատեսված դեպքերում,
3. ՀՀ կառավարության որոշմամբ նախատեսված դեպքերում,
4. փաստաբանների միության կանոնադրությամբ նախատեսված դեպքերում:

### **2. ՀՀ Ազգային ժողովի ընտրությունը նշանակվում է՝**

1. օրենքով,
2. ՀՀ կառավարության որոշմամբ,
3. ՀՀ Ազգային ժողովի որոշմամբ,
4. Հանրապետության Նախագահի հրամանագրով:

### **3. ՀՀ սահմանադրական դատարանի անդամն անփոփոխելի է և պաշտոնավարում է՝**

1. ցմահ,
2. մինչև իր 65 տարին լրանալը,
3. մինչև կենսաթոշակային տարիքի հասնելը,
4. մինչև իր 70 տարին լրանալը:



#### **4. Ի՞նչ է իրենից ներկայացնում տեղ. ինքնակառավարումը**

### **S Ո Մ Ս 15**

#### **1. Տուժողին պատճառված վնասի հատուցումն ապահովվում է՝**

1. օրենքով սահմանված կարգով,
2. դատավճռով սահմանված կարգով,
3. տուժողի և մեղադրյալի համաձայնությամբ,
4. այլ իրավաբանական ակտերով սահմանված կարգով:

#### **2. ՀՀ Ազգային ժողովի հերթական նստաշրջանները գումարվում են տարեկան՝**

1. մեկ անգամ,
2. երկու անգամ,
3. երեք անգամ,
4. չորս անգամ:

#### **3. ՀՀ սահմանադրական դատարանը որոշում է՝**

1. օրենքների համապատասխանությունը ՀՀ Սահմանադրությանը
2. օրենքների, ՀՀ Ազգային ժողովի որոշումների. Հանրապետության Նախագահի հրամանագրերի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրությանը.
3. օրենքների, ՀՀ Ազգային ժողովի որոշումների Հանրապետության Նախագահի հրամանագրերի և կարգադրությունների համապատասխանությունը ՀՀ Սահմանադրությանը.
4. օրենքների, ՀՀ Ազգային ժողովի որոշումների, Հանրապետության Նախագահի հրամանագրերի և կարգադրությունների, կառավարության որոշումների համապատասխանությունը ՀՀ Սահմանադրությանը:

#### **4. Ինչպիսի՞ն է ՀՀ վարչատարածքային բաժանումը և վարչատարածքային ո՞ր միավորումներում ինչպիսի՞ կառավարում է իրականացվում**

### **S Ո Մ Ս 16**

#### **1. Անմեղության կանխավարկածի իրավունք ունեն՝**

1. ՀՀ քաղաքացիները,
2. օտարերկրացիները,

3. քաղաքացիություն չունեցող անձինք,
4. յուրաքանչյուր ոք:

## **2. ՀՀ Ազգային ժողովում օրենքներն ընդունվում են նիստին ներկա պատգամավորների ձայների`**

1. մեկ չորրորդով,
2. մեկ երրորդով,
3. մեծամասնությամբ,
4. երկու երրորդով:

## **3. ՀՀ սահմանադրական դատարան կարող են դիմել`**

1. Հանրապետության Նախագահը և պատգամավորների առնվազն մեկ երրորդը.
2. Հանրապետության Նախագահը և պատգամավորների առնվազն մեկ երրորդը, ինչպես նաև Հանրապետության Նախագահի թեկնածուները՝ ընտրությունների արդյունքների հետ կապված վեճերով.
3. Հանրապետության Նախագահը և պատգամավորների առնվազն մեկ երրորդը, ինչպես նաև Հանրապետության Նախագահի և պատգամավորության թեկնածուները՝ ընտրությունների արդյունքների հետ կապված վեճերով և ՀՀ կառավարությունը՝ ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված դեպքում.
4. ՀՀ քաղաքացիները:

## **4. Որո՞նք են ՀՀ արտաքին քաղաքական կառավարման մարմինները:**

**Նշեք դրանցից յուրաքանչյուրի լիազորությունների շրջանակը:**

### **S Ո Մ Ս 17**

## **1. Հարկեր, տուրքեր մուծելու և այլ պարտադիր վճարումներ կատարելու պարտականություններ ունեն`**

1. օտարերկրացիները,
2. ՀՀ քաղաքացիները,
3. քաղաքացիություն չունեցող անձինք,
4. յուրաքանչյուր ոք:

## **2. ՀՀ կառավարությանն անվստահություն հայտնելու մասին որոշման նախագիծը քվեարկության է դրվում այն ներկայացնելուց`**

1. ոչ շուտ, քան 12 և ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում,
2. ոչ շուտ, քան 24 և ոչ ուշ, քան 36 ժամվա ընթացքում,
3. ոչ շուտ, քան 36 և ոչ ուշ, քան 48 ժամվա ընթացքում,
4. ոչ շուտ, քան 48 և ոչ ուշ, քան 72 ժամվա ընթացքում:

### **3. ՀՀ սահմանադրական դատարանի որոշումները վերջնական են, վերանայման ենթակա չեն և ուժի մեջ են մտնում՝**

1. հրապարակումից հետո՝ տասներորդ օրը,
2. ՀՀ պաշտոնական տեղեկագրում հրապարակվելու պահից,
3. հրապարակման պահից,
4. մեկամսյա ժամկետում:

### **4. Որո՞նք են պետության հիմնական հատկանիշները**

#### **Տ Ո Մ Ս 18**

### **1. Հանրապետության Նախագահը՝**

1. օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բնականոն գործունեությունն ապահովողն է,
2. պետության գլուխն է,
3. գործադիր իշխանության ղեկավարն է,
4. պետության բարձրագույն պաշտոնատար անձն:

### **2. ՀՀ Ազգային ժողովում օրենսդրական նախաձեռնության իրավունքը պատկանում է՝**

1. միայն պատգամավորներին
2. միայն ՀՀ Ազգային ժողովի մշտական հանձնաժողովներին
3. պատգամավորներին և կառավարությանը,
4. պատգամավորներին, ՀՀ կառավարությանը, Հանրապետության Նախագահին և ՀՀ վարչապետին:

### **3. ՀՀ սահմանադրական դատարանն ընդունում է՝**

1. վճիռներ և որոշումներ ,
2. վճիռներ և եզրակացություններ ,
3. դատավճիռներ և վճիռներ ,
4. որոշումներ և եզրակացություններ :

#### **4. Ի՞նչ է պետության ձևը և որոնք են դրա տարրերը**

##### **S Ո Մ Ս 19**

#### **1. Հանրապետության Նախագահն ընտրվում է՝**

1. երեք տարի ժամկետով,
2. չորս տարի ժամկետով,
3. հինգ տարի ժամկետով,
4. վեց տարի ժամկետով:

#### **2. Մինչև բյուջետային տարվա սկիզբը պետական բյուջեն Ազգային ժողովի կողմից չհաստատվելու դեպքում ծախսերը՝**

1. կատարվում են կառավարության որոշմամբ,
2. կատարվում են նախորդ տարվա բյուջեի համամասնություններով,
3. սառեցվում են,
4. հաստատում է Հանրապետության Նախագահը:

#### **3. Դատախազությունը գործում է՝**

1. ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով իրեն վերապահված լիազորությունների շրջանակում՝ դատախազության մասին օրենքի հիման վրա,
2. օրենքներով իրեն վերապահված լիազորությունների շրջանակում,
2. ՀՀ Սահմանադրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակում,
1. “ՀՀ դատախազության մասին” օրենքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակում:

#### **4. Ի՞նչ են իրավունքի սկզբունքները և ի՞նչ տեսակների են դրանք դասակարգվում**

##### **S Ո Մ Ս 20**

#### **1. Հանրապետության Նախագահ ընտրված է համարվում այն թեկնածուն, որն ստացել է՝**

1. թեկնածուների օգտին տրված ձայների կեսից ավելին,
2. քվեարկությանը մասնակցած ընտրողների ձայների մեծամասնությունը,

3. թեկնախճուներին օգտին տրված ձայների երկու երրորդը,
4. ընտրողների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդը:

## **2. ՀՀ Ազգային ժողովը վերահսկողություն է իրականացնում՝**

1. պետական բյուջեի կատարման նկատմամբ,
2. պետական բյուջեի և օտարերկրյա պետություններից ստացված փոխառությունների և վարկերի օգտագործման նկատմամբ,
3. պետական բյուջեի կատարման, ինչպես նաև օտարերկրյա պետություններից և միջազգային կազմակերպություններից ստացված փոխառությունների և վարկերի օգտագործման նկատմամբ,
4. ՀՀ կառավարության կոմիտեի օրենքների կատարման կատմամբ:

## **3. Դատախազությունը հսկողություն է իրականացնում՝**

1. պետական մարմինների և պաշտոնատար անձանց գործողությունների օրինականության նկատմամբ,
2. պետական մարմինների պաշտոնատար անձանց ֆիզիկական և իրավաբանական անձանց գործողությունների օրինականության նկատմամբ,
3. պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պաշտոնատար անձանց, ֆիզիկական և իրավաբանական անձանց գործողությունների օրինականության նկատմամբ,
4. նախաքննության և հետաքննության օրինականության նկատմամբ:

## **4. Քրեական դատավարության սկզբունքները և գործառույթները**

### **S Ո Մ Ս 21**

## **1. Հանրապետության Նախագահը պաշտոնն ստանձնում է՝**

1. ընտրվելու պահից,
2. ընտրվելուց քառասուն օր հետո,
3. ՀՀ Ազգային ժողովի հատուկ նիստում՝ ժողովրդին տրված երդմամբ,
4. ՀՀ կառավարությունը կազմավորելուց հետո:

## **2. ՀՀ կառավարության ընդունած՝ օրենքի ուժ ունեցող որոշումներն ստորագրում է՝**

1. ՀՀ Ազգային ժողովի նախագահը,
2. Հանրապետության Նախագահը.

3. ՀՀ վարչապետը,
4. ՀՀ Ազգային ժողովի նախագահը և ՀՀ վարչապետը:

### **3. Հայաստանի Հանրապետության վարչատարածքային միավորներն են՝**

1. գյուղերն և քաղաքները,
2. մարզերն և քաղաքները,
3. համայնքները և Երևան քաղաքը,
4. մարզերը և համայնքները:

### **4. Որո՞նք են միջազգային իրավունքի հիմնական սկզբունքները (բնութագրեք դրանցից մի քանիսը)**

## **Տ Ո Մ Ս 22**

### **1. Հանրապետության Նախագահը ՀՀ Ազգային ժողովի ընդունած օրենքն ստանալուց հետո ստորագրում և հրապարակում է այն՝**

1. տասնօրյա ժամկետում,
2. քսանմեկօրյա ժամկետում,
3. մեկամսյա ժամկետում,
4. անհապաղ:

### **2. Պատերազմ հայտարարում է՝**

1. ՀՀ Ազգային ժողովը՝ Հանրապետության Նախագահի առաջարկությամբ,
2. Հանրապետության Նախագահը՝ ՀՀ Ազգային ժողովի համաձայնությամբ,
3. ՀՀ վարչապետը՝ Հանրապետության Նախագահի համաձայնությամբ
4. Հանրապետության Նախագահը՝ ՀՀ վարչապետի առաջարկությամբ:

### **3. Տեղական ինքնակառավարման մարմիններն ընտրվում են՝**

1. համայնքի սեփականությունը տնօրինելու և համայնքային նշանակության հարցեր լուծելու համար,
2. համայնքներում պետական կառավարումն ապահովելու համար,
3. պետական տուրքեր և վճարներ գանձելու և համայնքի կառավարումն իրականացնելու համար,
4. համայնքներում կառավարության տարածքային քաղաքականությունն իրականացնելու համար:

#### 4. Ովքե՛ր են համարվում հանցագործության սուբյեկտն

##### ՎԻՐՏՈՒԱԼ ՕՐԵՆՔՆԵՐ

Հայաստանի Հանրապետության օրենքը Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին  
Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգիրք  
Հայաստանի Հանրապետության օրենքը “Իրավական ակտերի մասին”  
Հայաստանի Հանրապետության օրենքը Պետական կառավարչական հիմնարկների մասին  
Հայաստանի Հանրապետության օրենքը “Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության կարգը սահմանելու մասին”

##### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Գ. Հարությունյան, Վ. Ստեփանյան, Վ. Հովհաննիսյան ”Սահմանադրական վերահսկողություն” (ուսումնասօժանդակ ձեռնարկ բուհերի ուսանողների համար), Երեւան, “Նժար”, 1997, 128 էջ
2. “Պետություն եւ իրավունքի հիմունքներ” (դասագիրք հանրակրթական դպրոցի 9-10-րդ դասարանների համար)/ Գ. Ղազինյանի եւ Ռ. Պետրոսյանի խմբագրությամբ. Երեւան, “Լույս”, 1998, 336 էջ
3. Հ. Խաչատրյան, Հ. Ստեփանյան ”Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը”, Երեւան, “Նժար”, 1997, 80 էջ
4. “Պետության եւ իրավունքի հիմունքներ” / Վ. Ստեփանյանի խմբագրությամբ, Երեւան, “Նժար”, 1997, 88 էջ

# ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ

































